

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY
ФИЛОЛОГИЯ

ՀՏԴ՝ 82.09

DOI: 10.52971/18294316-2024.27.2-103

1990-ԱԿԱՆՆԵՐԻՆ ԳՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ ԾԱՎԱԼՎԱԾ
ԲԱՆԱՎԵՃԸ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ
ՎԵՐԱՄՐԾԵՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

Արամ Ա. Խաչատրյան

ԳԱԱ Ա. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախարան. Գրականության զարգացման, անցյալի գրական արժեքների ու գրական դեմքերի վերարձնորման տեսանկյունից գրական բանավեճերը կարևոր նշանակություն ունեն: Հետանկայիտության առաջին տարիներին ծավալված գրական բանավեճը՝ 1930-ական թվականների գրական կյանքի ու դեմքերի վերարձնորման անհրաժեշտության շուրջ, միտված էր հաղթահարելու խորհրդային գրականագիտության կողմից ստեղծված ու տասնամյակներով կարծրացած արժեքաբանական կարծրատիպերը: Մեռողներ և նյութեր. Աշխատանքում կիրառվել են վերլուծական և զուգադրական մեթոդները, ինչպես նաև ժամանակի մասով ուսումնասիրության արդյունքում փորձ է արվել բանավեճը ներկայացնել առավել լայն համապատկերում: Վերլուծություն. Հոդվածում ներկայացվում է 1930-ականների գրականության ու գրական դեմքերի վերարձնորման շուրջ ծավալված բանավեճը: Բանավիճային նյութը նորանկախ Հայաստանի գրական-մշակութային զարգացումը պայմանավորող կարևորագույն թեմաներից է, որը չունեցավ վերջնական հանգուցալուծում: Արդյունքներ. Ըստ էության, այս բանավեճը, լինելով խորհրդային շրջանի գրականության վերարձնորման մասին, ինչ որ իմաստով վերածվեց սերունդների բախման ու մնաց առկախված: Թեման հաղթահարված չէ մինչ օրս, և դեռևս չկա խորհրդային շրջանի գրականության վերարձնորման ամբողջական ու համակարգված աշխատություն, և այս իմաստով հոդվածը արդիական է:

Բանալի բառեր՝ գրականություն, բանավեճ, 1930-ականներ, վերարձնորում, գրական մասով, ԽՍՀՄ, մտավորականություն:

Ինչպես հղել՝ Խաչատրյան Ա. 1990-ականներին գրական մամուլում ծավալված քանակը՝ 1930-ական թվականների գրական կյանքի վերարձնորման շուրջ, // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ». Գյումրի: 2024: Հ.2 (27): 103-114 էջեր:
DOI: 10.52971/18294316-2024.27.2-103

THE DEBATE ABOUT THE RE-EVALUATION OF LITERARY LIFE IN THE 1930s UNFOLDED IN THE LITERARY PRESS IN THE 1990s

Aram A. Khachatryan

Institute of Literature named after M. Abegyan of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: Literary discussions are of great importance in terms of the development of literature and the re-evaluation of literary values and literary figures of the past. The literary discussion on the need to re-evaluate the literary life and personalities of the 1930s, which unfolded in the first years after independence, was aimed at overcoming the value stereotypes created by Soviet literary criticism and ossified for decades. **Methods and materials:** The work used analytical and comparative methods, and by studying the press of that time, an attempt was made to present the discussion in a broader perspective. **Analysis:** The article presents a discussion on the re-evaluation of literature and literary figures of the 1930s. The discussion material, which never reached a final resolution, is one of the most important topics that determined the literary and cultural development of the newly independent Armenia. **Results:** In fact, the discussion on the re-evaluation of the literature of the Soviet period, in a sense, turned into a clash of generations and remained in limbo. The topic has not been overcome to this day, since a full-fledged and systematic work on re-evaluation of the literature of the Soviet period has not yet been carried out, which is what determines the relevance of the article.

Key words: literature, discussion, 1930s, re-evaluation, literary press, USSR, intelligentsia.

Citation: Khachatryan A. *The Debate about the Re-evaluation of Literary Life in the 1930s Unfolded in the Literary Press in the 1990s*// “Scientific Works” of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 103-114 pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-103

ДИСКУССИЯ О ПЕРЕОЦЕНКЕ ЛИТЕРАТУРНОЙ ЖИЗНИ 1930-ЫХ ГОДОВ, РАЗВЕРНУВШАЯСЯ В ЛИТЕРАТУРНОЙ ПРЕССЕ В 1990-ЫХ ГОДАХ

Արամ Ա. Խաչատրյան

Իнститուտ լիтературы իմենի Մ. Աբեյան ՀԱՆ, Երևան, ՊԱ

Аннотация

Введение: С точки зрения развития литературы, переоценки литературных ценностей и литературных деятелей прошлого большое значение имеют литературные дискуссии. Литературная дискуссия о необходимости переоценки литературной жизни и лиц 1930-х годов, развернувшаяся в первые годы после обретения независимости, была направлена на преодо-

ление созданных советским литературоведением и десятилетиями закостеневших ценностных стереотипов. Методы и материалы: В работе использовались аналитический и сравнительный методы, к тому же в результате изучения прессы того времени была предпринята попытка представить дискуссию в более широкой перспективе. Анализ: В статье представлена дискуссия о переоценке литературы и литературных деятелей 1930-х годов. Дискуссионный материал, который так и не достиг окончательного разрешения, является одной из важнейших тем, определивших литературное и культурное развитие новой независимой Армении. Результаты: По сути, дискуссия, ведшаяся о переоценке литературы советского периода, в каком-то смысле превратилась в столкновение поколений и осталась в подвешенном состоянии. Тема до сегодняшнего дня не преодолена, так как до сих пор не проведена полноценная и систематическая работа по переоценке литературы советского периода, этим и обусловлена актуальность статьи.

Ключевые слова: *литература, дискуссия, 1930-е годы, переоценка, литературная пресса, СССР, интеллигенция.*

Как цитировать: Хачатрян А. *Дискуссия о переоценке литературной жизни 1930-ых годов, развернувшаяся в литературной прессе в 1990-ых годах.* // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. 103-114 сс.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-103

ՆԱԽԱԲԱՆ. 1980-ական թթ. Երկրորդ կեսից Ազգային զարթոնքին զուգահեռ Հայաստանի գրական-մշակութային կյանքում աշխարհայացքային և զաղափարաբանական զգալի փոփոխություններ են կատարվում. տպագրվում են նախկինում արգելված կամ քաղաքական տեսանկյունից նախկինում աննպատակահար համարվող մի շարք գործեր, այդ թվում՝ նաև հայաստանյան ընթերցողներին անծանոթ սիյուռքահայ հեղինակների: Հայաստանում առաջին անգամ լույս է տեսնում Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» ինքնակենսագրական վիպակը (1988), Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը (1994), Սուրեն Ղազարյանի «Դա չպետք է կրկնվի» (1988) ու Վահրամ Ալազանի «Տառապանքի ուղիներով»¹ (1990) հուշագրությունները, Ավետիս Սիարոնյանի «Խավարի մեջ» երկհատորյակը (1991) և այլն: Նախկինում երբնէ չհրապարակված գործերի հրապարակման հարցում ակտիվ էր նաև Ժամանակի մամուլը (նաև՝ ոչ գրական). հայաստանյան ընթերցողը առաջին անգամ հնարավորություն էր ունենում ընթերցելու լեռ Կամսարի «Դեպի պրոլետգրականության հեգեմոնիան» թատերակը [17], Կոստան Զարյանի «Անցորդը և իր ձամփան» վեպից ընդարձակ հատվածներ [13] և այլն: Միաժամանակ ակտիվանում է նաև թարգմանչական ոլորտը. «Գարուն» հանդեսի «Ապոլոն» հրատարակչությունը բնագրային թարգմանությամբ հայ ընթերցողին է ներկայացնում՝ համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակների տասնյակ գրքեր (Ուիլյամ Ֆոլքներ, Հերման Հեսսե, Ալբեր Քամյու, Ֆրանց Կաֆկա, Խորին Լուիս Բորխես և այլն), հատկանշական է նաև Ալեքսանդր Սոլժենիցինի «Արշակելագ գուլագ» գրքի՝ մայր հրատարակությանը զուգահեռ հայերեն թարգմանության հրատարակումը, նախ՝ «Գարուն» ամսագրում, ապա՝ առանձին գրքով:

¹ Ալազանի «Տառապանքի ուղիներով» հուշագրությունը 1990 թ. տպագրվել է զգայի կրմատումներով, 2023 թվականին գրականագետ Արմենիկ Նիկողոսյանը հրապարակել է հուշագրության ամբողջական տարրերակը՝ ճշգրտված վերնագրով [2]:

Զուգահեռ սրանց՝ «փակ զգրոցներից» հանվում և տպագրվում են արխիվային բազմաթիվ վավերագրեր, որոնք լույս են սփռում Խորհրդային իրականության 70-ամյա պատմության տարբեր շրջանների, իրադարձությունների ու դեմքերի վրա, ի ցույց դնում դրանք այլ տեսանկյունից՝ անհրաժեշտություն դարձնելով վերարձնորման և վերագնահատման խնդիրը՝ ոչ միայն գրական, այլև՝ պատմագիտական, հասարակական, քաղաքական ու այլ ոլորտներում:

1980-ական թթ. վերջից մամուլում հատկապես՝ Մերուժան Տեր-Գուլանյանի (1986-1990), ապա՝ Լևոն Անանյանի (1990-2001) խմբագրությամբ լույս տեսնող «Գարուն» ամսագրում պարբերաբար տպագրվում են արխիվային վավերագրեր ու խորհրդային իրականությանը վերաբերվող ամենատարբեր փաստաթղթեր: Այս շրջանում են լույս են տեսնում Դավիթ Գասպարյանի «Վերելքներ և անկումներ» (1989), «Ողբերգական Չարենցը» (1990), «Հայրենիք և ճակատագիր» (1991) գրքերը, մի շաբթ հրապարակումներ, որոնք հետազոտում գետեղվում են «Փակ դրների գաղտնիքը» (1994) գրքում: 20-30-ական թթ. մասին արխիվային նյութերի հրապարակումները լույս են սփռում այդ շրջանի գրական-հասարակական գործիչների կյանքի ու գործունեության վրա՝ հատկապես 30-ական թթ. ակտիվ գործունեություն ծավալած ու բացասական կողմերով աշքի ընկած գրողների ու գրականագետների (Նաիրի Զարյան, Հրայր Քոչար, Արտաշես Ռուկերյան և այլք):

Հետաքրքիր է, որ 1989 թ. այս տեսանկյունից ամենաքննարկվող հեղինակներից մեկի՝ Նաիրի Զարյանի կինը՝ արձակագիր Անժելա Ստեփանյանը, «Նորք» ամսագրում հատվածաբար հրատարակում է ամուսնու՝ Ժամանակին մերժված «Հարդագողի ճամփան» վեպը (1989, N 3, 4, 5)՝ նախաբանում առաջնորդվելով «Ժամանակն էր մեղավոր» տրամարանությամբ. ըստ Ստեփանյանի, վեպում Զարյանը ուզեցել է «Ժամանակի կատարած ցավալի սխալները վեր հանել, նկարագրել այն ողբերգությունները, որոնք շարունակվեցին նաև Ստալինի մահվանից հետո և դեռ կշարունակվեն», ըստ նրա, 1963 թ. վեպը մերժել են տպագրության ընդունել, որովհետև նպատակահարմար չի համարվել հրատարակել «37 թիվն այս կամ այն կերպ շոշափող գրական որևէ գործ» [25]:

ԽՍՀՄ վերջին տարիներից ակտիվորեն սկսեց շրջանառվել անցյալի վերարձնորման անհրաժեշտության հարցը: Օրինակ, 1990-91 թվականներին երկու փուլով կայացած ՀԳՄ 10-րդ համագումարի երկրորդ փուլում (1991թ. փետրվարի 14) գեկուցմամբ հանդես է գալիս Դավիթ Գասպարյանը, որն ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է նաև գրականության վերագնահատման անհրաժեշտությանը. «Նոր հայացքով պետք է վերարժեքավորվի ու մեկնաբանվի ամբողջ գրապատմական շարժման ընթացքը, գեղարվեստական երկերի ավելի լիարժեք ընդգրկումներով պետք է բացահայտվեն 20-րդ դարի հայ գրական մեծությունները» [10]:

Բնականաբար, փակ զգրոցների բացվելը, արխիվային հրապարակումները և վերարձնորումների շուրջ ծավալվող խոսակցությունները չընդունվեցին միանշանակ. որովհետև, նախ՝ Կոմունիստական կուսակցությունը դեռ որոշակիորեն կենսունակ էր գործընթացներն ուղղորդելու համար, և ողջ էր, այսպես ասած, վերագնահատվողների մի մասը, ինչպես նաև՝ նրանց ժառանգները: Խոսքը հիմնականում 1930-ական թթ. գրա-

կան կյանքում տեղի ունեցած իրադարձությունների, դրանցից տուժածների ու զիսավոր դերակատարների մասին է, առավելապես՝ 1930-ական թթ. երկրորդ կեսին իրականացված սպանդի, ինչին զոհ գնաց մեր մտավորականության մի մասը, մյուսներն ել արտօրվեցին, ու ստիպված եղան իրենց կյանքի մի մասն անցկացնել աքսորավայրերում: Սկսված գործընթացը, բնականաբար, զուգակցվեց ընդհարումներով՝ թե մամուլում, թե՝ մամուլից դուրս:

Հենց այս շրջանում սկսվեց 30-ական թթ. վերագնահատման վերաբերյալ ընդգրկուն բանավեճ, որ շարունակվելով՝ ձգվեց շուրջ երկու տասնամյակ:

Այսպես, «Գրական թերթի» 1991 թվականի մարտի 1-ի համարում տպագրվում է արձակագիր Անահիտ Սահինյանի «Անպաշտպանության զգացումից թելադրված» հոդվածը, որն, ըստ էության, մեղադրանք էր՝ ուղղված արխիվային նյութերը հրապարակողների «անբարեխղճության» դեմ. «Արխիվները բացվել են, բայց արխիվները լրջորեն չեն հետազոտվում: Դրա համար երկար ժամանակ է պետք, իսկ համբերություն չկա: Աշխարհ զարմացնելու, իրենց վրա ուշադրություն կենտրոնացնելու սիրահարները վրա են ընկել արխիվներին, քջուզում են, ում ձեռքն ինչ փաստաթուղթ ընկնում է, շտապում է հրապարակել՝ ջանք չթափելով պարզելու համար, թե այդ փաստաթղթերին ինչեր են նախորդել, ինչ կտտանքներ ու կեղծիքներ, բարոյահոգերանական ինչ մթնոլորտի արդյունք են» [21]: Այս շրջանում Դավիթ Գասպարյանը թերևս ամենաակտիվն էր գրավում արխիվային վավերագրերի ու փակ դռների հետևում մնացած ամենատարբեր նյութերի հրապարակումներով, և հոդվածն էլ ընդհանուր առմամբ գրվել է Գասպարյանի հրապարակումների առնչությամբ:

Տարիներ անց գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը, անդրադառնալով Սահինյանի հոդվածին և դրա շուրջ ծավալված բանավեճին, գրում է. «Թերևս իբրև Անահիտ Սահինյանի հոդվածի դրդառիթ կարող էր ծառայել Դավիթ Գասպարյանի «Ու հետազիծ» հրապարակումը՝ 1930-ականներին իր սև գործունեությամբ աչքի ընկած Արտաշես Ոսկերչյանի մասին (տե՛ս «Գարուն», 1991, թիվ 3, էջեր 66-69)» [20]: Սակայն, մեր համոզմամբ, հոդվածի անմիջական շարժառիթն այլ էր՝ չորս հիմնավորումով.

1. Սահինյանի հոդվածը հրապարակվել է «Գրական թերթի» 1991 թվականի մարտի 1-ի համարում, իսկ «Գարուն» ամսագրի 3-րդ համարը, որտեղ գետեղված էր Գասպարյանի «Ու հետազիծ» հոդվածը, տպագրության է հանձնվել մարտի 12-ին:

2. Սահինյանը գրում է. «Դավիթ Գասպարյանը լրջմիտ գրականագետ է: Բայց ահա չեմ կարողանում պատասխան գտնել այն հարցին, թե նա ի՞նչ մտածեց, որ հրապարակեց Զարենցի դատավարության մասին պատմող նյութերից պատառիկներ: Արդյո՞ք ուզում էր ցույց տալ..., որ նա խելագարվելու աստիճան սիրահարված էր այդ կնոջը...բայց մերժում ստացավ, չհանդուրժեց վիրավորանքը, նրան սպանելու փորձ կատարեց...» [21]: Խոսքը «Երեկոյան Երևան» օրաթերթում Դավիթ Գասպարյանի և Ամատուն Վիրաբերյանի կողմից հրապարակված Եղիշե Զարենցի 1926 թվականի դատավարության վերաբերյալ նյութերի մասին է [8]:

3. Սահինյանը գրում է. «...ի՞նչ մտածեց Դավիթ Գասպարյանը, որ «Գարունում» հրապարակեց Նահիդ Զարյանին վերաբերող մեծածավալ նյութը» [21]: Խոսքը «Գա-

րուն» ամսագրի 1990 թ. 8-րդ համարում Նախրի Զարյանի՝ ՀամԿ(թ)Կ Կենտկոմ ներկայացված՝ 1937թ. դեկտեմբերի 2-ի թվագրությամբ ինքնարդարացնող նամակի հրապարակման մասին է [7]:

4. Սահինյանը գրում է. «Գագիկ Սարգսյա՞ն: Ակադեմիկո՞ս: Նա ինչ զիտնական է և ինչ ակադեմիկոս: Կարդում ենք «Գարուն» ամսագրում: Հոդվածի հեղինակը մեզ լավ հայտնի դոկտոր-պրոֆեսոր, խորհրդարանի երեսփոխան պարոն Ռաֆայել Իշխանյանն է» [21]: Խոսքը Ռաֆայել Իշխանյանի «Ժամանակավրեալ ճիգեր» հոդվածի մասին է [14], որը պատասխան է ՀԽՍՀ զիտությունների ակադեմիայի փոխնախագահ, Արեւագիտության ինստիտուտի տնօրեն Գագիկ Սարգսյանի՝ «Պատմա-բանասիրական հանդես» 1990 թ. 1-ին համարում տպագրված «Նախահայրենիքի, ժողովրդի կազմավորման և Ուրարտուի մասին» հոդվածին: Թեման պատմագիտական է, և դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից:

Այսինքն, Սահինյանի հոդվածի անմիջական շարժառիթը Դավիթ Գասպարյանի, Ամասուն Վիրաբյանի և Ռաֆայել Իշխանյանի կոնկրետ երեք հրապարակումներն են, թեև հոդվածում հեղինակը հպանցիկ անդրադառնում է նույն շրջանի մամուլում՝ հատկապես «Գարուն» ամսագրում տպագրված մի քանի արխիվային նյութերի ևս:

Սահինյանը դգորհում է ժամանակի մամուլից, ապա մեղադրում «Գրական թերթի» խմբագիր Ֆելիք Մելոյանին գրողների հետ չհամագործակցելու, հոդվածներ չպատվիրելու² և, ընդհանուր առմամբ, «սերունդների մեջ ստեղծված անջրպետը» վերացնելու գործընթաց չսկսելու համար:

Սահինյանի հոդվածը մեծ արձագանք ունեցավ. նախ «Գրական թերթում» հանդես եկավ քանատեղծուիի, հրապարակախոս Անահիտ Աղամյանը³, որը, ըստ Էռլյան, կրկնեց Սահինյանի մեղադրանքերը՝ ուղղված արխիվային փաստաթղթերը «անբարեխողներն» հրապարակողների դեմ: Նոյնիսկ հոդվածի վերնագիրն է «սահինյանական»՝ «Պաշտպանելու անհրաժեշտությունից թելադրված» [1]:

Սահինյանի հոդվածին անդրադառնում է նաև հասցեատերը՝ Դավիթ Գասպարյանը, սակայն «Գրական թերթի» խմբագիր Ֆելիք Մելոյանը մերժում է պատասխան հոդվածի տպագրությունը [9, էջեր 376, 378] և հոդվածի սեղմ տարբերակը տպագրվում է ոչ գրական «Անդրադարձ» թերթում [5, ամբողջական տարբերակը՝ 9, էջեր 363-376]: Գասպարյանը Սահինյանի՝ «պաշտպանելու անհրաժեշտությունը» որակում է որպես «լեղապատառ սարսափ», ապա գրում. «Սահինյանն առաջին հերթին թողնում է կրապաշտության քարոզիչի տպագրություն, ով, անտեսելով կամ նսեմացնելով անցյալ տասնամյակներում ստեղծված բուն ազգային արժեքները, այդ արժեքների վերականգմանը նպաստող գիտնականների ջանքերը, ամեն ինչ փորձում է վերադարձնել իրերի հին ու սիսալ դասավորությանը» [5]: Սահինյանի այն ձևակերպմանը, թե «...ի՞նչ մտա-

² Հատկանշական է, որ «Գրական թերթի» հաջորդ խմբագիրը՝ Հովհաննես Գրիգորյանը, Սահինյանին հոդված է պատվիրում նոր իրականությունում գրողին ու գրականությանը վերապահված դերի վերաբերյալ, թերթի խմբագրությունն առաջարկում է նաև վերնագիր՝ «Խիդճ...» [22]:

³ Գրականագետ Ա. Նիկողոսյանն իր «1930-ականների գրական լյանքն ու դեմքերը անկախության շրջանի բանավեճերում (Երկու ուրվագիծները)» հոդվածում որպես Սահինյանի հոդվածի առաջին արձագանք ներկայացնում է «Գարուն» ամսագրում հրապարակված Ս. Աղրեսյանի նամակը [20, էջ 46]:

ծեց Դավիթ Գասպարյանը, որ «Գարունում» հրապարակեց Նախրի Զարյանին վերաբերող մեծածավալ նյութը՝՝ Գասպարյանը պատասխանում է կտրուկ. «...մտածեց ոչ այն, ինչ դուք՝ ձեր բացահայտ կողմնապահությամբ և կարձամտությամբ: Մտածեց, որ ժամանակն է ամբողջացնելու գրողների կյանքի և ստեղծագործության փակ ու անհայտ էշերը և, առանց ձեզ ու ձեր նմաններին հարցնելու, առանց ձեր և ձեզ նմանների կշտամբանքներին ականջ դնելու, անցավ գործի» [5]: Գասպարյանը մեջբերում է Սահնակի՝ տարբեր տարիների հրապարակած հոդվածներից հատվածներ՝ մատնանշելով նրա «Երախտագիտության և սիրահարվածության» տուրքը առ Նախրի Զարյան, Սիրաս, Արաքս և այլք: Ըստ Գասպարյանի, Սահնակնը մտահոգության իրական պատճառն այն է, որ նա վախենում է իր «նախկին կուռքերի արժեզրկումից»: Գասպարյանի հոդվածում առկա են Սահնակնի հասցեին վիրավորական արտահայտություններ և ձևակերպումներ, և Մելոյանի կողմից հոդվածը հրապարակելու մերժումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այս հանգամանքով:

Գասպարյանի հոդվածին հաջորդեց Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պաշտոնաթերթում հրապարակված համախոսականը՝ «Ի պաշտպանություն գրողի» [16]: Համախոսականը ստորագրել էին Հրանտ Մաթևոսյանը, Մարտ Մարգարյանը, Լևոն Հայկերդյանը, Սաղաթել Հարությունյանը, Էդուարդ Միլիտոնյանը, Ազատ Եղիազարյանը: Համախոսականի ընդհանուր ասելիքն այն էր, որ բանավեճերում չի կարելի օգտագործել այնպիսի «անձշմարիտ» և «տգեղ» արտահայտություններ, ինչպիսիք գործածում է Գասպարյանը Սահնակնի հետ բանավեճում: Գասպարյանը հանդես է գալիս պատասխան հոդվածով, որն, ըստ էռաջյան, բաց դիմում է Սահնակին, որոշակիորեն նաև հարաբերությունների պարզմանը միտված գրություն: Նույն տրամաբանությամբ է նաև անդրադարձ համախոսականին. Հրանտ Մաթևոսյանի առնչությամբ Գասպարյանը գրում է. «...Մաթևոսյանը նողկանքով խոսեց այդ գրության մասին և ասաց, որ իր անունը պարզապես կորզել էր», իսկ Մարտ Մարգարյանը նշել է. «...գրությունը չեմ կարդացել ընկերուիիս է, խնդրեց, չմերժեցի»: Նշենք նաև, որ Անահիտ Սահնակնը դիմել է նաև այդ ժամանակ Գրողների միության վարչության նախագահ Վահագն Դավթյանին՝ Դավիթ Գասպարյանին «պատժելու» համար քարտուղարության ընդլայնված նիստ գումարելու նպատակով [6, էջեր 372-374]:

Որոշ ժամանակ անց «Գարուն» ամսագրի ընթերցողներից Սուսաննա Ապրեսյանը հանդես եկավ կարճ նամակով, որում իր վրդովմունքն էր արտահայտում Անահիտ Սահնակնի «հնառ դասերի» և դրան ի պատասխան «Գարուն» ամսագրի լրության վերաբերյալ. «...ինչո՞ւ լուցիք, երբ «Գրական թերթում» (N 9, 1991թ.) Անահիտ Սահնակնը ձեզ հնառ դասեր էր տալիս, թե ինչու եք գրում գրական անցյալի ճշմարտության և արդի գիտության մեջ ծաղկող մաֆիայի մասին» [4, էջ 31]: Սրան ի պատասխան Սահնակնը նույն ամսագրում հրապարակում է բաց նամակ՝ ուղղված ամսագրի խմբագրությանը՝ «Մենք դեռ ճամփա ունենք իրար հետ զնալու» վերնագրով: [23, էջեր 28-30] Ասելիքը նույն տրամաբանության մեջ էր՝ պետք չեր «մոլեռանդ երկրպագուհու» նամակը հրապարակել: Ինչպես նախորդ հոդվածում, սրանում ևս Սահնակնը խոսում է սերունդների միջև առաջացած անջրպետի և դա վերացնելու անհրաժեշտության մա-

սին: Նամակում ակնհայտ է գրական իրադարձությունների լուսանցքում մնալու վախը և ինքնարդարացման միտումը. յուրաքանչյուր սերունդ «շարժվում է իրեն վիճակված «բնակլիմայական» պայմանների համաձայն... սերնդափոխությունը պարզ մեխանիկական գործողություն չէ», -գրում է նա, ապա՝ մտահոգություն հայտնում «ավագների» դեմ նոր սերնդի ընդվզման հետ կապված. «... շարունակում են ընդվզել ավագների դեմ, այսօր արդեն նոր մեղադրանքներով՝ «նրանք սխալ ճանապարհով են գնացել, նրանք սխալ ճանապարհով են տարել մեր գրականությունը, դավաճանել են ժողովրդին, ծառայել բոլշևիզմին» [23, էջ 30]:

Սահինյանի հոդվածին ի պատասխան հանդես է գալիս Ռաֆայել Իշխանյանը՝ «չպատասխանելն արդեն հանցանք կիմն» պատճառաբանությամբ [15, էջեր 60-61]: Իշխանյանը նախ համաձայնում է Ս. Ապրեսյանի «ինչո՞ւ» է լուս «Գարունը» հարցադրմանը, ապա՝ հոդվածի առաջին մասում անդրադառնում և ընդգծում 30-ական թվականների «լենին-ստալինյան եղեննի» բոլոր ծալքերը բացելու կարևորությունը. «37 թվի գոհերի ու «երոսների» մասին մանավանդ արժե գրել, քանի որ բացառված չէ, որ նույնը կրկնվի մի նոր տարբերակով: 37-ի բոլոր ծալքերը պետք է բացահայտել, այդ թվում այն օրերի լրտեսներին ու բանսարկուներին պետք է լույս աշխարհ հանել»: Մասնավորեցնելով խոսքը՝ Իշխանյանն անցնում է առավել սուր ձևակերպումների. «Կարելի է ենթադրել նաև, նա (Սահինյանը- Ս. Խ.) լավ հարաբերությունների մեջ է եղել Ն. Զարյանի հետ և չեր ուզենա, որ այն տարիների արածները հրապարակ հանվեին» [15, էջ 61]:

Սահինյանի թե՝ այս, թե՝ նախորդ հոդվածում առկա է (ինքն)արդարացում՝ «Ժամանակներն էին այդպիսին» տրամաբանությամբ, ինչի առնչությամբ Իշխանյանը իրավացիորեն նկատում է. «Եվ տվյալ պարագայում գրական սերունդների հակառակության կամ սերնդափոխության հարց բնավ չկա: Ամեն սերնդի մեջ էլ լինում են ազնիվներ ու սրիկաներ: & շմարտության հարց կա, ծշմարտությունն ասելու հարց, նաև անկեղծորեն զղալու, ապաշխարելու հարց: Սա էլ երևի բոլորիս է վերաբերում, մանավանդ՝ նախսկին կումունիստներին: **Զջոռուն է ներում ստանալու միակ ճանապարհը, ոչ թե արդարանալը»** (ընդգծումը մերն է- Ս. Խ.) [15, էջ 61]:

Թեման «Գրական թերթի» էջերում շարունակում է գրականագետ Ազատ Եղիազարյանը [12]: Եղիազարյանը ներկայացնում է անցյալի գրականության վերագնահատման իր սկզբունքներն ու իր դիտարկումները: Ընդհանուր առմամբ, ըստ նրա, խորհրդային յոթանասուն տարիների ընթացքում ստեղծվածը հայ մշակույթի ու գրականության մի մասն է՝ իր բարդ ու հակասական կողմերով, և «ինդիրը այդ բարդության էությունը հասկանալն է» և ոչ թե պիտակավորելն ու մերժելը, և «դիվաններին պետք է մոտենալ» միայն այս տեսանկյունից: Մասնավորեցնելով խոսքը և անդրադառնալով 30-ականն թվականներին իր ամենաբացասական կողմերով աշքի ընկած Նաֆրի Զարյանին՝ Եղիազարյանը գրում է. «Ակնհայտ է, որ Զարյանը, լիովի կրելով իր օրերի նախապաշտումներն ու մոլորությունները, մեղքի իր բաժինն ուներ ստեղծված գրական բարբերի համար: Բայց մի բան է ծշմարտությունն ասելը և մի այլ բան՝ Զարյանի «ոչնչացման» այն կիրքը, որը տևեց տասնամյակներ և այսօր նորից բարձրանում է... Զարյանը խորհրդային շրջանի մեր իսկապես ամենատաղանդավոր գրողներից մեկն էր» [12]:

Եղիազարյանը ընտրում է ճշմարտությունն ասելու ամենամեղմ ձևը՝ Զարյանի քաղաքացիական կեցվածքը բնորոշելով որպես «մոլորդություն» կամ օգտագործելով «մեղքի իր բաժին» ձևակերպումը:

Վերջում Եղիազարյանը գրողների վերագնահատման հարցում նախապատվությունը տալիս է ժամանակին, օրինակ բերելով Հմայակ Սիրասին. «Այստեղ էլ վերագնահատման խնդիր, բատ էության, չկա: Ըստերցողները Սիրասին վաղուց մոռացել են, ահա վերագնահատումը» [12]:

Հատկանշական է, որ Եղիազարյանի հոդվածից հետո՝ «Գրական թերթի» հաջորդ համարում «Հայացք պատմությանը» խորագրով հրապարակվում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Անաստաս Միկոյանի հետ գրողներ Վաղարշակ Նորենցի, Հրաչյա Քոչարի, Նաիրի Զարյանի, Գեղամ Սարյանի և Հրաչյա Հովհաննիսյանի՝ 1962 թ. մարտի 14-ի հանդիպման սղագրությունը: Մեր համոզմամբ հրապարակված նյութը և խմբագրության կարճ նախաբանը ակնհայտ միտում ունեն ցույց տալու, որ վերագնահատման համատեքստում ամենաքննարկվող և քննադատվող դեմքերը, մասնավորապես՝ Նաիրի Զարյանը և Հրաչյա Քոչարը, 30-ական թթ. հետո, ավելի ուշ շրջանում՝ 50-ական թվականներին, ազգայն կեցվածք են դրսենորել. խմբագրության նախաբանում կարդում ենք. հանդիպման «անմիջական արձագանքը պիտի համարել Շանթի ստվարածավալ հատորի լույս ընծայումը, ազգային-ազատագրական պայքարի, Զորավար Անդրանիկի մասին առաջին անկանխական հրապարակումները» [18]:

Եղիազարյանի հոդվածից հետո 30-ական թվականների գրական դեմքերի վերագնահատման շուրջ ծավալված բանավեճը առկախված է մնում, բանավիճող կողմերը դադարում են հոդվածներով հանդես գալ, սակայն թեման շարունակում է սրված մնալ, բանավեճի ուղղակի և անուղղակի բազմաթիվ արձագանքներ կան այս շրջանի գրական և արտագրական մամուլում:

Գրականագետ Սերգեյ Սարինյանը այս առնչությամբ բանավիճային հոդված չի գրում, սակայն այդ ժամանակ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսի՝ «Երեկոյան Երևան» օրաթերթին տված հարցազրույթի [19] առիթով հպանցիկ անդրադառնում է նաև վերագնահատումների խնդրին. «Առհասարակ մենք սովոր չենք երևույթները քննել փորձի ու գիտակցության վերին մակարդակներում: Ընդհանրացումներ ենք կատարում «առողջ դատողությամբ» կառուցված ճշմարտությունների վրա, մոռանալով, որ այս կամ այն հասկացության իմաստը կարող է հակադարձվել մի այլ հարաբերության մեջ: Այսպես կոչված «արժեքների վերաբերմունք» այժմ դարձել է մեր մտավոր շարժման գլխավոր ձգտումը և ինքնին հրապուրում է հրապարակախոսին, քաղաքագետին, գիտնականին: Վերագնահատվում է ամեն ինչ, և ժխտումն ավելի տիրական է, քան հաստատումը, սակայն տակավին յուրացված չէ պարագորսի ենթակայությունը հավանականության տեսությանը: Մինչդեռ թերևս անհրաժեշտ խորհել նաև անհավանականության տեսության օրենքներով» [24]:

Ժամանակակի մտավորականի տեղի ու դերի մասին Գևորգ Դերիկյանի «Այդ ազգապաշտպան, բայց և անպաշտպան մտավորականները» հոդվածում հանդիպում

ենք թեմային վերաբերող սուր ձևակերպումների. «Շատ վաղուց է, որ չկա մեծն Զարենցը, բայց չէ՝ որ մինչև օրս էլ կան նրան հալածողներից ու հարցարննողներից: ...կան նաև երևի մյուսների՝ Բակունցի, Թոթովենցի, Զապել Եսայանի ու շատ-շատերի դահճաներից» [11]:

Գրական թերթում Միլվա Կապուտիկյանի, Մարտ Մարգարյանի, Անահիտ Սահինյանի և Բագրատ Ուլութաբյանի ստորագրությամբ տպագրված ռեպիկից պարզ է դառնում, որ թեման շրջանառվում է նաև հեռուստատեսությամբ, մասնավորապես՝ «Արտավազդ» ստեղծագործական միավորման ցուցադրության ժամանակ Նախրի Զարյանին մեղադրել են գրագողության մեջ [3]:

1930-ական թվականների գրական կյանքի ու դեմքերի, մասնավորապես, Նախրի Զարյանի և Հրաչյա Քոչարի վերաբերյալ ծավալուն բանավեճ է սկսվում նաև շատ ավելի ուշ շրջանում՝ 2007 թվականին:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ուսումնասիրելով 1930-ական թթ. գրական դեմքերի ու իրադարձությունների վերագնահատման շուրջ հետանկախության առաջին տարիներին ծավալված բանավեճը, կարող ենք նշել, որ ինչպես հայ իրականության մեջ ծավալված գրեթե բոլոր գրական բանավեճերը, սա ևս ինչ-որ պահից որոշակիորեն վերածվում է անձնական վիրավորանքների ու «փոխիրաձգության»: Թեև թեման մնում է առլախված, սակայն արծարծված թեմաները ստանում են լայն հնչողություն և նպաստավոր առիթ դառնում հետագա վերաբերյալների համար:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Աղամյան Ա.** «Պաշտպանելու անհրաժեշտությունից թերդուխած»: «Գրական թերթ»: 1991: N 11:
2. **Ալազան Վ.** «Տառապանքի ուղիներում»: Երևան: «Անտարես» հրատ.: 2023, 440 էջ:
3. «...Այս էլ այս օրերին» (ռեպիկ): «Գրական թերթ»: Երևան: 1992: N 25:
4. **Ապրեսյան Ս.** «Իրդովմունք»: «Գարուն»: Երևան: 1991: N 9: 31 էջ:
5. **Գասպարյան Դ.** «Կերակրիր քո ձին, ճամփան երկար է...», «Անդրադարձ», Երևան: 1991, N 19:
6. **Գասպարյան Դ.** «Լահազն Դափշան. Կյանքը և ստեղծագործությունը»: Երևան: Կրթության ազգային ինստիտուտ: 2007: 376 էջ:
7. **Գասպարյան Դ., Վիրաբյան Ա.** «Երրորդ կյանք կամ Նախրի Զարյանը ինքն իր մասին»: «Գարուն»: Երևան: 1990, N 8, 52-66 էջեր:
8. **ԷջԳասպարյան Դ., Վիրաբյան Ա.** «Զարենց. նյութեր կենսագրության համար»: «Երեկոյան Երևան»: Երևան: 1990: N 28:
9. **Գասպարյան Դ.** «Քննադատությունն ընդդեմ քննադատության»: Երևան: «Գրական Էտապոն» հրատ.: 2012: 488 էջ:
10. «Գրողը և ժամանակը» (<ԳԱՄ 10-րդ համագումարի նյութեր), «Գրական թերթ»: Երևան: 1991: N 8,1 էջ:
11. **Գևրիկյան Գ.** «Այդ ազգապաշտպան, բայց և անպաշտպան մտավորականները», «Գրական թերթ»: Երևան: 1992: N 24:
12. **Եղիազարյան Ա.** «Գրական թերթ»: Երևան: 1992: N 5:
13. **Զարյան Կ.** «Անցորդը և իր ճամփան»: «Նորք»: Երևան: 1989: N 6: 3-52 էջեր:
14. **Խիսանյան Ռ.** «Ժամանակավեճա ճիգեր»: «Գարուն»: 1990թ., N 8, 54-61 էջեր:
15. **Խիսանյան Ռ.** «Ճշմարտությունն անենից բարձր է...»: «Գարուն»: Երևան: 1992, N 4: 60-61 էջեր:
16. «Ի պաշտպանություն գրողի» (համախոսական): «Հայաստան»: Երևան: 1991: N 111: 4 էջ :
17. **Կամսար Լ.** «Դեպի պրուտղականության հեզեննիշան»: «Գարուն»: Երևան: 1988: N 1:36-46 էջեր:

18. «Հայացը պատմությանը» (ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության նախագահի տեղակալ Անաստաս Միկոյանի հետ գրողներ Վաղարշակ Նորենցի, Հրաչյա Քոչարի, Նարին Զարյանի, Գեղամ Սարյանի և Հրաչյա Հովհաննիսյանի՝ 1962 թվականի մարտի 14-ի հանդիպման սղագրությունը): Գրական թերթ: Երևան: 1992: N 6:
19. «Մշակույթը որպես բնական ընտրություն» /հարցազրույց Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար Հակոբ Մովսեսի հետ/: «Երեկոյան Երևան»: 1991: N 237:
20. Նիկողոսյան Ա. «1930-ականների գրական կյանքն ու դեմքերը անկախության շրջանի բանավեճերում (Երկու ուրիշագիծ): «Դպրուուն»: Ստեփանակերտ: 2023-1 (15), 46 էջ:
21. Սահինյան Ա. «Անսպա՛ռանույթյան զգացումից թեկարդիամ»: Գրական թերթ: Երևան: 1991: N 9, 1 էջ:
22. Սահինյան Ա. «Խիդճը...», «Գրական թերթ»: Երևան: 1996: N 5:
23. Սահինյան Ա. «Մենք դեռ ճամփա ունենք իրար իւս զնալու» (Բաց նամակ «Գարունի» տնօրեններին): «Գարուն»: 1991: N 11-12: 28-30 էջեր:
24. Սարինյան Ա. «Մինչև ե՞րբ և մինչև ո՞ւր»: «Գրական թերթ»: Երևան: 1992: N 9:
25. Ստեփանյան Ա. «Երբ և ինչպես է զովել «Հարդազողի ճամփան»: «Նորք»: Երևան: 1989: N 3, 8-9 էջեր:

R e f e r e n c e s

1. Adamyan A. Dicted by the need to protect [Pashtpanelu anhrajeshtutyunic drdvac]. "Literary newspaper". 1991. N 11:
2. Alazan V. In the Paths of Suffering [Tarapanqi uxinerum] Yerevan. "Antares" publ. 2023, 440 p.
3. ...That too these days (replica) [Ayn el ays orerin]. "Literary newspaper". Yerevan. 1992. N 25:
4. Apresyan S. Indignation. [Vrdovmung] "Garun". Yerevan. 1991. No. 9: 31 p..
5. Gasparyan D. Feed your horse, the journey is long... [Kerakrir qo dzin champan erkar e], "Andradarc", Yerevan. 1991, No. 19.
6. Gasparyan D. Vahagn Davtyan: Life and creativity [Vahagn Davtyan. Kyanq ev stexcagorutyuny] National Institute of Education, 2007: 376 p.
7. Gasparyan D., Virabyan A. Third life or Nairi Zaryan about himself [Errord kyanq kam Nairi Zaryann ingn ir masin]. "Garun". Yerevan. 1990, No. 8, 52-66 pp..
8. Gasparyan D., Virabyan A. Charents. Materials for biography [Charenc. nyuter kensagrutyany hamar.] "Erekoyan Erevan": Yerevan. 1990. No. 28.
9. Gasparyan D. Criticism against criticism [Qnnadatutyunn ynddem qnnadatutyany]. Yerevan: "Grakan etalon" publ., 2012, 488 p.
10. Writer and Time [Groxy ev jamanaky]. "Literary newspaper". Yerevan. 1991. No. 8.
11. Devrikyan G. Those national defenders, but also defenseless intellectuals [Ayd azgapashtpan bayc ev anpashtpan mtavorakannery], "Literary newspaper". Yerevan. 1992. N 24:
12. Yeghiazaryan A. Time to understand [Haskanalu jamanaky]. "Literary newspaper". Yerevan. 1992. No. 5.
13. Zaryan K. The passerby and his way [Ancordy ev ir champan]. "Nork". Yerevan. 1989. No. 6. 3-52 pp..
14. Ishkhanyan R. Timely Efforts [Jamanakavrep chigger]. "Garun". 1990, No. 8, 54-61 pp..
15. Ishkhanyan R. Truth is supreme... [Chshmartutyuny amenic bardzr I]. "Garun". Yerevan. 1992, No. 4.
16. In defense of the writer (interview) [I pashtpanutyun groxi]. "Armenia". Yerevan. 1991. N 111:
17. Kamsar L. Towards the hegemony of proletarian literature [Depi proletgrakanutyany hegemonian]. "Garun". Yerevan. 1988. No. 1. 36-46 pp..
18. A look at history [Hayacq patmutyany]. "Literary newspaper". Yerevan. 1992. No. 6.
19. Culture as a natural choice [Mshakuty vorpes bnakan yntrutyun] /interview with the Minister of Culture of the Republic of Armenia Hakob Movses/. Erekoyan Erevan. 1991 No. 237.
20. Nikoghosyan A. The literary life of the 1930s and the faces in the debates of the period of independence (Two sketches) [1930-akanneri grakan kyanqn u demqery ankakhutyan shrjani banavecherum]. "Dpratun". Stepanakert. 2023-1 (15), page 46.

21. **Sahinyan A.** Dicted by a feeling of insecurity [Anpashtpanutyan zgacumic teladrvac], "Literary newspaper". Yerevan. 1991. No. 9,
22. **Sahinyan A.** Conscience... [Khixjy...], "Literary newspaper". Yerevan. 1996. No. 5:
23. **Sahinyan A.** We still have a long way to go together [Menq der champa unenq irar het gnalu] (Open letter to "Garun" directors). Garun. 1991. No. 11-12: 28-30 pp...
24. **Sarinyan S.** Until when and until where? [Minchev erb ev minchev ur] "Literary newspaper". Yerevan. 1992. No. 9:
25. **Stepanyan A.** When and how was written Hardagoghs travelers [Erb ev inchpes e grvel Hardaghoghi champordnery]. "Nork". Yerevan. 1989. No. 3, 8-9 pp..

Հնդունվել է / Принята / Received on: 06. 11. 2024

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 26. 11. 2024

Համձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 12. 12. 2024

Տեղեկություններ հեղինակի մասին

Արամ Աշոտի ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ ԳՎԱ Ս. Աբեղյանի անվ.
գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, Երևան, <<
Էլ. հասցե՝ aramkhachtryan93@mail.ru // Orcid ID/0009-0009-4685-3117

Aram Ashot KHACHATRYAN:
Junior researcher at the Institute of Literature after M. Abegyan, Yerevan, RA
e-mail: aramkhachtryan93@mail.ru // Orcid ID/0009-0009-4685-3117

Арам Ашотович ХАЧАТРЯН: младший научный сотрудник
им.М.Абегяна Института литературы НАН, Ереван, РА
эл. почта: aramkhachtryan93@mail.ru // Orcid ID/0009-0009-4685-3117